

գլխաւոր փոփոխութիւնները և յետոյ պիտի յիշատակենք Ս. Ծննդեան մօտ կառուցուած հայոց վանքը ու անոր վերաբերեալ հայկական յիշատակները :

1. Քրիստոսի Ս. Ծննդեան այրը Կոստանդիանոսէ յառաջ .

Յայտնի է որ Ս. Ծննդեան այրը կը գտնուի Բեթղեհէմի աւրեւելքը, քաղաքէն զուրս : Յուստինոսի եւ Որոզինէսի բացատրութեանց նայելով Բեթղեհէմը կ'երեւի թէ բուսական հեռի էր այրէն, և ան հետզհետէ ընդարձակուելով կը մօտենար այրին : Եկեղեցւոյ այս երկու հայրերու կողմէն այրին նկատմամբ տըրուած վկայութիւնները պէտք է ընդունիլ թէ պատմական մեծ արժէք մը կը ներկայացնեն, և համոզում կը գոյացնենք թէ նոյն իսկ առաջին դարերէ սկսեալ տեղացի և եկուոր քրիստոնէայք կը պատուէին Փրկչին ծնած այրը ու ան առարկայ էր արդէն բարեպաշտական սովորութեանց :

Հոս մէջ կը բերենք նոյն երկու հայրերու վկայութիւնները : Յուստինոս 155 ին իր Տրակախօսութեան մէջ (78. 5) կը գրէ Մատթէոսի Բ. 1, յիշելէ յետոյ, « եւ տղան ծնաւ այն ատեն Բեթղեհէմի մէջ, որովհետեւ Յովսէփ չէր գիտեր թէ ո՛ւր պիտի բնակէր, Բեթղեհէմի մօտ այրի մը մէջ հաստատուեցաւ. և մինչ հոն կը գտնուէր՝ Մարիամ ծնաւ զՔրիստոս եւ զբաւ զԱնիկա մսուրի մը մէջ. երբ Արարիոյ մոգերը հասան՝ հոն գտան մասնուկը » : Որոզինէս 215 ին արդէն ճամբորդած էր Պաղեստին և անտարակոյս տեսած էր Քրիստոսի Ս. Ծննդեան այրը : Իսկ 248 ին իրեն հակառակորդ Կելսոսի կը գրէ հետեւեալը. « Քրիստոսի Բեթղեհէմի մէջ ծնած ըլլալու մասին, Միքիայի մարգարէութեանէն, Յիսուսի աշակերտներուն կողմէն պատմուած Աւետարանէն յետոյ, եթէ մէկը ուրիշ ապացոյցներ ալ ուզէ, թող գիտնայ թէ անոր ծննդեան նկատմամբ Աւետարանի մէջ պատմուածին նման, Բեթղեհէմի մէջ ցոյց պիտի տրուի ա՛յն այրը, որուն մէջ ան ծնած է, և այս այրին մէջ այն մսուրը, ուր խանձարւրապատեցաւ : Եւ ինչ որ ցոյց կը տրուի ծանօթ է ամէնուն, նոյն իսկ հեթանոսներուն, այսինքն քրիստոնէից կողմէն երկըրպագեալ և հիացեալ Յիսուսը ծնած է այս այրին մէջ » : Զսնց